

Ж. М. Н. Пр. = Журнал министерства народного Просвещения СПб.

Mél. as. = Mélanges asiatiques, tirés du Bulletin historico-philologique et du Bulletin de l'Académie, T. I—VIII.

СПб. вед. = Санкт-Петербургские Ведомости.

Bull. de l'Acad. = Bulletin de l'Académie...

Mém. = Mémoires de l'Académie Impériale des sciences, de Saint-Petersbourg.

Изв. И. Археолог. Общ. = Известия Имп. Археологического Общества.

Изв. Вост. Отд. И. Археолог. Общ. = Известия Восточного Отделения Имп. Археологического Общества.

Journ. as. = Journal asiatique.

Journ. de SPb. = Journal de Saint-Petersbourg.

Das. Asiat. Mus. = Das Asiatische Museum der Kaiserischen Akademie des Wissenschaften zu St.-Petersburg.

N. Journ. as. = Nouveau Journal Asiatique.

Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ՆՈՐԸ ԿՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԴԱՐԱՆՈՒՄ

Տարեց-տարի ընդարձակվում են Գրականության և արվեստի թանգարանի կապերը աշխարհի բոլոր հայաբնակ կենտրոնների հետ, հարստանում են նրա արխիվային ֆոնդերը, գրադարանը, լայնանում սպասարկման շրջանակները։ Այժմ թանգարանը դարձել է հանրապետության հայագիտական նշանավոր օջախներից մեկը, իսկ վերջին հարյուրամյակի մշակութային կյանքին վերաբերող վավերագրերի ընդգրկման տեսակետից՝ առաջինը։

Միայն վերջին երկու տարվա ընթացքում Սովետական Միության տարբեր վայրերից և սփյուռքահայ կենտրոններից ձեռք են բերվել հայ գրողների, երաժշտագետների, թատերական գործիչների կյանքին ու գործունեությանը վերաբերող մոտ 20000 վավերագրեր՝ գրական-գեղարվեստական ևրկերի ինքնագրեր, նամակներ, գեղանկարչական ու քանդակագործական հազվագյուտ նմուշներ, լուսանկարներ։

Գրողներ Մովսես Արագու, Կոստանդին Մելիք-Շահնազարյանի, Բանասերներ Կարապետ և Հովսեփ Կուսիկյանների (Մոսկվա) ժառանգները սիրահոժար թանգարանին հանձնեցին նրանց հարուստ արխիվները, որոնք հսկայական նյութ են պարունակում վերջին 50—60 տարիների հայ հասարակական ու մշակութային կյանքի մասին։

Թատերական բաժնում ստացվել են ուժիսյոր Արմեն Գուլակյանի արխիվը, փաստաթղթեր ժողովրդական արտիստ Հրաչյա Ներսիսյանի մասին, Մեծապես հարստացել են երաժշտական բաժնի նյութերը. երաժշտագետներ Քրիստափոր Քուշնարյանի (Լենինգրադ), Ս. Շաթիրյանի, Կ. Սարաջևի, Շարա Տալյանի արխիվները, կոմպոզիտոր Ալան Հովհաննեսի (ԱՄՆ), ջութակահար Գր. Քրաչյանի, ուղահար Սարգսի (Ստամբուլ) գործունեությանը վերաբերող նյութ-

թերը, վավերագրերը բնութագրում են հայ արվեստագետների ստեղծագործական կապերը ՍՍՀՄ և արտասահմանյան երկրների գործիչների հետ։

Համալրվել են առաջներում ստեղծված մի շարք ֆոնդեր. ձեռք են բերված Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Դ. Վարուժանի, Ռ. Ջարդարյանի, Ռ. Սևակի, Վրթանես Փափագյանի, Ս. Չարենցի մի շարք երկերի ինքնագրեր, գրականագետներ Հ. Սուրխաթյանի, Յ. Խանզադյանի ձեռագրերը, այդ թվում վերջինիս «Հայ գրականության պատմություն» աշխատության ինքնագիրը և այլն։

Թանգարանը սերտ կապերի մեջ է եղել սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների ու գործիչների հետ։ Արտասահմանից ստացված նյութերի մեջ ամենից առաջ պետք է նշել Անդրանիկ Անդրեասյանի ջանքերով ԱՄՆ-ից ուղարկված գրող-հրապարակախոս Հովհաննես Ավագյանի և նրա կողմից խմբագրված «Հայաստանի կոչնակ» հանդեսի արխիվները, ինչպես և բանաստեղծ Հակոբ Գույումճյանի ստացած նամակների հավաքածուն։ Դրանք արժեքավոր վավերագրական նյութեր են պարունակում վերջին հիսնամյակի ամերիկահայ և ընդհանրապես սփյուռքահայ հասարակական ու մշակութային կյանքի մասին։ Տիկին Պարսամյանը (Ֆրանսիա) թանգարան է ուղարկել դարասկզբի գրական-մշակութային գործիչներ Մերուժան և Մկրտիչ Պարսամյանների արխիվների մի մասը՝ XIX—XX դարերի արևմտահայ գրողների, հրապարակախոսների ավելի քան հարյուր հազվագյուտ լուսանկար, նրանցից մի քանիսի հետ ունեցած նամակագրությունը, առանձին ձեռագիր աշխատություններ, Փարիզահայ մշակութային միության ջանքերով թանգարան բերվեցին բժիշկ

Վահան Թորոդյանի, գրող Զարեհ Որբունու արխիվները, Երուսաղեմից՝ Թիկատինցու «Դեպի արտասահման» պիեսի ձեռագիրը և մի շարք նամակներ, Իրենց ձեռագիր և տպագիր աշխատությունները թանգարան են ուղարկել գրողներ Հրանտ Թորոսյանը, Վահան Մալեգյանը (Ֆրանսիա), Գուրգեն Թրենցը (Ստամբուլ), Պ. Տատյանը (Արգենտինա) և ուրիշները, Հայաստան այցելած տիկ. Արմենուհի Գևոնյանը թանգարան է հանձնել իր հոր՝ գրող-բանահավաք Գեղամ Տեր-Վարապետյանի (Մշո Գեղամ) արխիվի մի մասը։ Այս բոլորի շնորհիվ վերջին երկու տարում ստեղծվել են ավելի քան 30 նոր արխիվային ֆոնդեր։

Թանգարանի հանձնարարությամբ ՍՍՀՄ-ում և արտասահմանում դրի են առնվել հուշեր գրականության և արվեստի գործիչների մասին, Ստեղծվել է հուշագրությունների մի պատկառելի ֆոնդ, որի շնորհիվ վերականգնվում և գրականագիտության ու արվեստաբանության սեփականություն են դառնում հայ ականավոր արվեստագետների կյանքին վերաբերող բազմաթիվ շահեկան մանրամասնություններ։ Նույն ժամանակում ձեռք են բերվել մշակութային կյանքին վերաբերող 1200 լուսանկար, 1910—1920-ական թթ. մի շարք բեմադրությունների էսքիզներ և այլն։

Զգալի չափով համալրվել է թանգարանի հայագիտական գրադարանը։ Այստեղ խնամքով պահվում են Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Գ. Սունդուկյանի, Ե. Շահազիզի, Մ. Արեղյանի, Ա. Զոպանյանի, Ա. Սաֆրաստյանի, Թ. Ազատյանի, Վ. Հաբեշյանի, Գ. Արսլանյանի, Գ. Դեմիրճյանի, Ա. Ոսկանյանի, Ե. Զարենցի, Գ. Ավետյանի, Վ. Վաղարշյանի հարուստ գրադարանները, որտեղ կարելի է գտնել հայագիտության և արվեստի տարբեր բնագավառների վերաբերյալ բոլոր լեզուներով գրված հազվագյուտ գրքեր։ Այստեղ պահպանվում է հայերեն հնատիպ գրքերի մի պատկառելի հավաքածու. բավական է ասել, որ 1512—1800 թթ. ընթացքում հայերեն լեզվով տպագրված 1019 գրքերից 239-ը այս թանգարանի սեփականությունն են կազմում։ Մեկ տարվա ընթացքում ձեռք է բերվել 7 հնատիպ գիրք, այդ թվում Եզոպոսի առակների 1787 թ. կալկաթայի հրատարակչությունը։ Այստեղ են պահվում վերջին հարյուրամյակում տարբեր երկրներում լույս տեսած պարբերականների հազվագյուտ հավաքածուներ, այդ թվում՝ «Շտեմարան պիտանի գիտելյաց», «Արևելք», «Արևմուտք», «Բաղմավեպ», «Հանդես ամսօրյա», «Արևելյան մամուլ», «Կիլիկիա», «Մասիս», «Թատրոն րարեկամ մանկանց», «Փորձ», «Արձագանք»,

«Լուսա», «Մուրճ», «Բյուզանդիոն», «Կոչնակ Հայաստանի», «Անահիտ» և այլն։

Սիայն 1965 թ. գրադարանային ֆոնդն ավելացավ մոտ 2500 գրքով. նոր գրքեր են ստացվել Մելինե Դովանճյանից (Բրյուսել), Մարգար Ղարաբեգյանից (Պարսկաստան), Ահարոն Տատուրյանի և Մկրտիչ Փորթուգալյանի ժառանգներից (Ֆրանսիա)։ Ներկայումս թանգարանում կենտրոնացված են հայ գրականության նմուշների թարգմանությունները Սովետական Միության ժողովուրդների լեզուներով, ինչպես նաև անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, չեխերեն, լեհերեն, հունգարերեն, պարսկերեն, արաբերեն, թուրքերեն։

Արևելագետների շրջանում մեծ հետաքրքրություն է առաջ բերել Ա. Զոպանյանի, Ա. Սաֆրաստյանի, Թ. Ազատյանի արխիվների հետ թանգարան բերված անգլերեն, գերմաներեն, թուրքերեն գրքերի հավաքածուն։ Դրանք անսպառ նյութ են պարունակում «հայկական արցի» մասին, նրա արժարժման օրից սկսած մինչև առաջին համաշխարհային պատերազմը։

Թանգարանի արխիվը և գրադարանը լայն չափով օգտագործվում են գիտնականների կողմից։ 1965 թ., բացի մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության աշխատողներին ամեն օր տրամադրվող նյութերից, միայն Գիտությունների ակադեմիայի գրականության, լեզվի, պատմության, արվեստի ինստիտուտների, արևելագիտության, փիլիսոփայության սեկտորների, պետհամալսարանի, մանկավարժական ինստիտուտների և եղբայրական հանրապետություններից եկած 1748 գիտաշխատողների պահանջով թանգարանի գրական, թատերական, երաժշտական բաժիններից նրանց տրամադրվել է 22500 արխիվային վավերագիր, հայագիտական և ֆոնդային գրադարանները 1335 պահանջագրով գիտական շրջանառության մեջ են դրել 7074 գիրք և մամուլի հավաքածու։

Թանգարանի կողմից գիտաշխատողներին տրամադրվող նյութերի գիտական բարձր արժեքի մասին է վկայում այն փաստը, որ 1965 թ. Գիտությունների ակադեմիայի հրատարակչությամբ լույս տեսած 26 անուն հայագիտական գրքերից 14-ը գրվել են թանգարանի ֆոնդերի հիման վրա, այդ թվում՝ Ռ. Պատկանյանի, Լ. Հովհաննիսյանի, Հ. Պարոնյանի, Ե. Զարենցի երկերի հերթական հատորները, Ե. Արզումանյանի «Զապել Եսայան», Ա. Համբարյանի «Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում» մենագրությունները, Խ. Գյուլնազարյանի և Ս. Մանուկյանի «Հակոբ Հակոբյանի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը», «Հայաստան» հրատարակչության լույս ըն-

ծայած գրական, թատերական, երաժշտական ստեղծագործությունների զգալի մասի համար ևս աղբյուր են հանդիսացել թանգարանային ֆոնդերը:

Արդեն հինգերորդ տարին է, որ թանգարանը ձեռնարկել է աշխարհի այլ թանգարաններում պահպանվող հայագիտական հազվագյուտ վավերագրերի միկրոֆիլմերի ձեռքբերմանը, Առաջին նյութերը թանգարանին տրամադրեց Փարիզի Նուպարյան մատենադարանը. մատենադարանի տնօրեն Արմենակ Սալմասյանի սիրալիր աջակցությամբ ստացվեցին Հ. Պարոնյանի խմբագրությամբ լույս տեսած «Թատրոն» և «Լույս» երգիծաթերթերի այն համարների միկրոֆիլմերը (մոտ 800 կադր), որոնք հանրապետության գրադարաններում չկային: Ֆրանսահայ երիտասարդական միության օժանդակությամբ երաժշտագետ Ավետիս Մեսումենցը նեպոլիի թանգարանում պահվող օրինակներից մեր թանգարանի համար արտագրեց նեպոլիտանական օպերային դպրոցի խոշորագույն ներկայացուցիչ Ալեսանդրո Սկարլատտիի 1714 թ. գրած և հաջորդ տարում նեպոլում բեմադրած «Տիգրան մեծ» օպերայի երաժշտությունը և հանեց լիբրետտոյի միկրոֆիլմը, XVIII դարի երկրորդ կեսի իտալական կոմպոզիտոր Նիկոլո Պիչչինիի դարձյալ Տիգրան մեծի մասին գրած օպերայի ամբողջ կլավիրի և լիբրետտոյի միկրոֆիլմը: Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտի արխիվից հանվեցին ծովանկարիչ Հ. Այվազովսկու, յեզվարան Նորայր Բյուզանդացու, Դ. Ախվերդյանի, Ռ. Պատկանյանի, Ստ. Նազարյանցի, Ալիշանի և այլոց՝ Կ. Նզյանի ֆոնդում պահվող նամակների միկրոֆիլմերը՝ մոտ 1200 կադր: Մոսկվայի Վ. Ի. Լենինի անվան գրադարանի ձեռագրատան ֆոնդերից ստացվեցին բոլոր հայ գրողների ու արվեստագետների Վալերի Բրյուսովի ֆոնդում եղած նամակների միկրոֆիլմերը:

1965 թ. այդ ֆոնդի վրա ավելացել են երկու կարևոր միկրոֆիլմեր, Լենինգրադի Սալտիկով-

Շչեդրինի անվան հանրային գրադարանից ստացվել է մանկագիր-առակագիր Աթաբեկ Խնկոյանի բանաստեղծությունների 1890 թ. հրատարակության միակ օրինակի միկրոֆիլմը, Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանից՝ 1871—1872 թթ. Հակոբ Պարոնյանի խմբագրությամբ Կ. Պոլսում լույս տեսած «Նփրատ» երգիծաթերթի 15 համարների միկրոֆիլմը՝ 60 կադր: Այս վերջինը բացառիկ պիտական արժեք ունի: Հ. Պարոնյանի այդ երգիծաթերթը հայ պարբերական մամուլի պատմության մեջ իր լիակատար նկարագրությունը դեռ չունի, իսկ գրականությանը բոլորովին անհայտ է մնացել նրա պարունակությունը: Այժմ պարզվում է, որ այդ թերթը լույս է տեսել ընդամենը 27 համար. ցարդ հայտնաբերված 17 համարներում զետեղված են մեծ երգիծարանի վաղ շրջանի ստեղծագործություններից 80 ավարտուն երկ, որ բոլորովին անծանոթ են մնացել ոչ միայն ընթերցողին, այլև Պարոնյանի ստեղծագործության հետազոտությամբ զբաղվող բանասերներին:

Ստացված միկրոֆիլմերը գրեթե ամբողջովին օգտագործվել են գիտական հասարակայնության կողմից: Միկրոֆիլմերի հավաքման այս պրակտիկան ոչ միայն լավ արդյունք է տալիս, այլև զարգացման մեծ հեռանկարներ ունի արխիվային գործի կազմակերպման ներկա պայմաններում:

Ներկայումս թանգարանի գիտական աշխատողների կոլեկտիվը իր առաջ նոր խնդիրներ է դրել՝ հայտնաբերել և թանգարանում կենտրոնացնել նորանոր արխիվներ, շարունակել որոնումները մինչ այժմ դեռ չհայտնաբերված մի շարք ականավոր գործիչների ձեռագրերը գտնելու ուղղությամբ, ֆոնդեր ստեղծել ժամանակակից բոլոր գրողների, դերասանների, երաժշտագետների անունով, ընդլայնել գիտահետազոտական աշխատանքները:

Գ. ՄԱԴՈՅԱՆ

РАСКОПКИ ЦЕНТРАЛЬНОГО КВАРТАЛА ГОР. ДВИНА

(1964—1965 гг.)

Археологические работы в Двине, которые ведутся Институтом археологии и этнографии АН Армянской ССР под руководством проф. К. Г. Кафадаряна, имеют

многолетнюю историю и известны своими результатами.

Раскопки города, начавшиеся в 1937 году, дали исключительно богатый материал